

## ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՔՈԼԵԶԻ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 9-ի N 1791-Ն որոշմամբ ՀՀ ոստիկանության ակադեմիա պետական հիմնարկը վերակազմավորվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիր պետական ոչ առևտրային կազմակերպության և հաստատվել է վերջինիս կանոնադրությունը (վերնագիրը փոփ. 28.04.2011թ. N 615 – Ն որոշմամբ):

Կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումներից է միջին մասնագիտական կրթական ծրագրի իրականացումն ապահովող քոլեջը: Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետը, լեզուների, հասարակագիտական առարկաների և հոգեբանության, տեխնիկական առարկաների, մարտական, ֆիզիկական պատրաստականության և ոստիկանության տակտիկական պատրաստականության ամբիոնները:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրով «Ոստիկանական գործ» մասնագիտությամբ «Ոստիկանության սպա» որակավորմամբ ուսուցում: Միջին մասնագիտական կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն ավարտած, պետական ատեստավորում անցած շրջանավարտներին շնորհվում է «Ոստիկանության սպա» որակավորում: Կրթության և գիտության նախարարի 27.12.2010թ. թիվ 1740-Ն հրամանի համաձայն միջին մասնագիտական կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտությամբ «Ոստիկանության-սպա» որակավորմամբ մասնագետը կարող էր իրականացնել տեսուչի /բացառությամբ ճանապարհային ոստիկանության տեսուչի/ զբաղմունքները, իսկ 2019 թվականի հուլիսի 23-ի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի թիվ 380-Ն հրամանի համաձայն միջին մասնագիտական կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտությամբ «Ոստիկանության-սպա» որակավորման մասնագետն իրականացնելու է հետևյալ զբաղմունքները՝

- 1) հետաքննության տեսուչ,
- 2) պարեկային տեսուչ,
- 3) համայնքային ոստիկանության և ընտանիքում բռնության կանխարգելման տեսուչ:

Միջին մասնագիտական կրթական ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով, երկու տարի ժամկետով: «Ոստիկանական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտների համար ապահովում է ոստիկանական գործունեության բնագավառի կարողությունները և հմտությունները ձեռք բերելու համար պահանջվող ծավալով տեսական ու գործնական գիտելիքների, ինչպես նաև ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, հրազեն և հարկադրանքի այլ միջոցներ գործադրելու հմտություններ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի միջին մասնագիտական կրթության ուսումնական գործընթացի տևողությունն ու բովանդակությունը սահմանվում է Կրթահամալիրի պետի կողմից հաստատված ուսումնական պլանով: